

**ԳՐԱՐԱՐԻ ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅԱՆ
ԱՆԳԱՍՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԵՋ**

Ժ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայտնի է, որ ոչ հիմնական խոսքի մասերը նախադասության անդամ չեն դառնում: Բայց նախադրությունները, ի տարբերություն շաղկապների, եղանակավորող բառերի և ձայնարկությունների, իրենց խնդրի հետ միասին լինում են նախադասության մեկ անդամ (պարագա, խնդիր, որոշիչ, բացահայտիչ):

Քերականագիտության մեջ շատ վաղուց ստորոգյալն ըստ կազմության բաժանվել է երկու տեսակի՝ պարզի և բաղադրյալի:

Պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում» ծավալուն հոդվածում՝ իրավացիորեն նշում է, որ բացի ստորոգյալից, վերլուծական կամ բաղադրյալ կարող են լինել նաև խնդիրները, պարագաները և ընդհանրապես կապերի, կապական բառերի ու այլ խոսքի մասերի՝ որպես կապի խնդիրների զուգակցումներով արտահայտվող անդամները: Վապի և կապի խնդրի զուգակցությունները, շարունակում է հեղինակը, շարահյուսական միություններ են և ոչ թե ձևաբանական:

Վերլուծականության երևույթը գործում է նաև դրաբարի նախադրությունների՝ կիրառական համակարգում. այնտեղ նախադրությունն իր խնդրի հետ միասին հստակում է նախադասության մեկ անդամ՝ վերլուծական կամ բաղադրյալ դրսևորումով: Օրինակներ. «Հիմունք սորա հաստատությանը եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան, և ոչ ի վերայ երկրի» (Եղ., էջ 103)²: «Պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ» (Կոր., էջ 44)³: Այս նախադասություններում նախադրություններն իրենց խնդիրների հետ կատարում են մեկ ամբողջական պաշտոն: Հետևաբար, նախադասության տվյալ անդամները հարկ է անվանել վերլուծական կամ բաղադրյալ պարագա և խնդիր:

Նախադրություններն արտահայտում են քերականական զանազան տարբերություններ և իրենց խնդիրների հետ միասին լինում են նախադասության տարբեր անդամներ:

Նախադրությունների և որպես այդպիսիք գործածվող բառերի դերակշռող մասն արտահայտում է տարածական հարաբերություն: Դրանք ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է կամ որտեղից սկսվում է և կամ դեպի ուր ուղղված է գործողությունը ու իրենց խնդիրների հետ դառնում են բաղադրյալ կամ վերլուծական տեղի պարագա: Դրանք են՝ առաջի, զառաջեալ, յառաջեւ, արաւմոյ, յանդիման, դէմ յանդիման, դէպ, զկնի, զհետ, ի հետոյց:

1 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 37—58:

2 «Եղիշի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957:

3 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

րնդ աշմէ, րնդ առաջ, րնդ դէմ (րնդդէմ), ի թիկանց, գրիկամբի, գրիկունս, ի կողմն, ի կողմանս, ի կողմանէ, րնդ կողմն, գկողմամբ, յայսկոյս, յայնկոյս, ի մէջ, ի միջի, ի միջոյ, րնդ մէջ, ի միջոց, ի միջոցի, յետոյ, յետուստ, ներքոյ, ի ներքոյ, ի ներքուստ, ի ներքսագոյն, ի վերայ, ի վերոյ, վերոյ, ի վերուստ, առնքեր, անդր քան, արտաքս քան, արտաքոյ քան, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև, ի ներքոյ քան, ի բացեայ, բացագոյն (ի բացագոյն), հեռի, հեռագոյն, մեկուսի, ի վեր, շուրջ, շուրջանակի, ի ստորեւ և այլն: *Օրինակներ.* «նախարարքն արտաքոյ քաղաքին սպասէին նոցա» (Ազաթ., էջ 116): «Եւ ինչն Գառնի ի վերուստ խրամատիցն, և կոտորեաց անդ զայլադգիսն» (Աստ., հ. 2, էջ 81)⁵: «Ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն գիւղն յԱշտիշատ» (Կար., էջ 88):

Իրանցից մի քանիսր, բացի տարածական հարաբերությունից, արտահայտում են նաև այլ հարաբերություններ և, բացի տեղի պարագայից, դառնում են նախադասության այլ անդամներ:

Առաջի, րնդդէմ բռներն արտահայտում են նաև ընդդիմության հարաբերություն և իրենց խնդիրների հետ լինում են ընդդիմության խնդրի: *Օրինակ՝* «Զի ամբարձ ձեռս րնդդէմ Տեառն, և առաջի Տեառն ամենակալի ընդվզեցաւ» (Աստ., հ. 3, էջ 287):

Ընդդէմ-ն ունի նաև հանգման իմաստ, ինչպես՝ «Եւ հասեալ րնդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց» ((Թ. Ա., էջ 241)⁶:

Զկնի, զհետ, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև, յետոյ բռներն արտահայտում են նաև գործողության, եղելության կատարման ժամանակը և իրենց խնդիրների հետ դառնում են ժամանակի պարագա: *Օրինակներ.* «Յաղագս թէ զկնի մեռանելոյն ներսիսի, թէ որպէս ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ զամենայն զեղեալսն կրօնսն կանոնիցն» (Բուզ., էջ 154)⁷: «Մօտ ի վախճան յայն սերմանէ կոմս մի ծնանելոց է» (Եղնիկ, էջ 142)⁸: «Սասանականքն որդի ի հօրէ կարգաւ առին մինչև ցայսօր զթագաւորութիւնն» (Ն. տ., էջ 160): «Յետոյ ամենեցուն զնայր և նա փախստական» (Սեբ., էջ 64)⁹:

Զկնի, զհետ նախադրություններն արտահայտում են նաև միասնության հարաբերություն և իրենց խնդիրների հետ լինում են միասնության պարագա, ինչպես՝ «Ոչ կարացի ընթանալ և զհետ րնկերացն ժամանել» (Ազաթ., էջ 108):

Ի վերայ նախադրությունը, բացի տարածական հարաբերությունից, արտահայտում է նաև բաղմամբիվ այլ հարաբերություններ, ինչպես՝

ա) նպատակի և իր խնդրի հետ լինում է նպատակի պարագա: *Օրինակ՝* «Բաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս» (Ղեւոնդ, էջ 149)¹⁰:

բ) պատճառի և իր խնդրի հետ լինում է պատճառի պարագա, ինչպես՝ «մտնեցայ ի վերայ ամենայն թշնամեաց իմոց» (Աստ., հ. 3, էջ 16): «Պակասեաց անձն իմ ի վերայ սպանելոցն» (Ն. տ., էջ 531):

⁴ «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփլիս, 1909:

⁵ Աստուածաշունչ, բաժանեալ ի շորս հատորս, Վենետիկ, 1805:

⁶ «Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917:

⁷ «Փայտատուի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883:

⁸ «Եղնիկայ Կողբացոյ Բագրեանդայ Լպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826:

⁹ «Սեբեոսի Լպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939:

¹⁰ «Պատմութիւն Հայոց Ղեւոնդեայ Մեծի վարդապետի», Ս. Պետերբուրգ, 1887:

գ) վերաբերության և իր խնդրի հետ դառնում է վերաբերության անուղղակի խնդիր: Օրինակներ. «Զորս խօսեցայ ի վերայ տանն Խորայէլի և ի վերայ տանն Յուդայ» (Ագաթ., էջ 197): «Ի վերայ եկացն և պանդխտաց հրաման կայր» (Եզնիկ, էջ 268):

դ) ժամանակի և իր խնդրի հետ լինում է ժամանակի պարագա, ինչպես՝ «Հասանէր թագաւորն ի վերայ իրացն» (Ագաթ., էջ 70): «Այս Արամայիս կեցեալ ամս՝ ծնանի դորդի իւր զԱմասիա. ի վերայ որոյ կեցեալ և այլ ևս ամս՝ մեռավ» (Խոր., էջ 40)¹¹:

ե) հանգման և իր խնդրի հետ գործածվում է որպէս հանգման անուղղակի խնդիր: Օրինակներ. «Եկին հասին ի վերայ նորա» (Ագաթ., էջ 19): «Տիրէր նա ի վերայ զաւռացն» (Աստ., հ. 2, էջ 593): «Զի տրտմութիւն ի տրտմութեան վերայ հասանէ աւագիկ» (Ն. տ., հ. 4, Յաւելուած, էջ 79):

Ժամանակային հարաբերություն են արտահայտում յետ. յառաջ քան, յառաջագոյն քան, նախ քան, ի հետէ նախադրություններն ու որպէս այդպիսիք գործածվող բառերը: Ինչպէս արդեն նշվել է վերևում, բացի տարածական հարաբերությունից, նաև ժամանակային հարաբերություն են արտահայտում հետևյալ բառերը՝ զկնի, զհետ, հուպ, մերձ, մօտ, մինչ, մինչև, յետոյ, ի վերայ: Դրանք իրենց խնդիրների հետ լինում են ժամանակի պարագա:

Օրինակներ. «Մնան նոցա որդիք յետ ջրհեղեղին» (Աստ., հ. 1, էջ 21): «Եւ զայս աղօթս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին» (Բուդ., էջ 189): «Զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամշտութեամբ առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք» (Ն. տ., էջ 203):

Նպատակային հարաբերություն արտահայտող նախադրություններն ու իբրև նախադրություն գործածվող բառերն են՝ ի համար, ի պէտս, սակս, ի սակս, յայն սակս, յոր սակս, վասն. ի փառս, ի պատիւ, յօգուտ և այլն: Նպատակի հարաբերության իմաստ ունեն նաև աղագաւ, յաղագս, ի վերայ և այլ բառեր: Դրանք իրենց խնդիրների հետ դառնում են նպատակի պարագա: Օրինակներ. «Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար րազաւորութեան» (Խոր., էջ 118): «Պատուեա՛ղ զբժիշկ ի պէտս ահաին քո, դի և նա յԱստուծոյ արարեալ է» (Աստ., հ. 4, Յաւելուած, էջ 34): «Յայժմ ես վասն քո յաշտ առէի, յայսմ՛հետէ դու վասն իմ առնիցես» (Եզնիկ, էջ 115): «Դու որ օրինօք սնեալ ես և կեաս ի փառս կրակաց» (Փար., էջ 96)¹²: «Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անուն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պաւսիւ հաւր իւրոյ» (Սեբ., էջ 118): «Եւ ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց» (Բուդ., էջ 209):

Աղագաւ, յաղագս, յերեսաց, պատնառաւ, ի պատնառս և այլ նախադրություններ ու իբրև նախադրություն առնված բառեր արտահայտում են պատնառակա՛ն հարաբերություն: Գործողության կամ եղելության կատարման պատճառն են ցույց տալիս նաև ի պէտս, սակս, ի սակս, վասն, յայն սակս, յոր սակս և այլ բառեր: Դրանք այդ դեպքում իրենց խնդիրների հետ դառնում են պատճառի պարագա: Օրինակներ. «Չարին աղագաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ» (Խոր., էջ 15): «Նեխեցան և փտեցան

¹¹ «Մովսիսի խորենացոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913:

¹² «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տրփղիս, 1904:

վերք իմ, լեւեսաց անգգամութեան իմոյ» (Աստ., հ. 3, էջ 44): «Արդ ի պատ-
հառս ձեռ և դմեզ անողորմ դատին» (Եղ., էջ 56): «Եւ թշնամի կոչի՝ վասն
զորոմնն ի մէջ ցորենոյն սերմանելու» (Եզնիկ, էջ 184): «Քանզի անմարմինք
են հրեշտակք և դեր, յայն սակս և ծնունդք ոչ դոն նոցա» (Ն. տ., էջ 97):

Յաղագս, սակս, ի սակս, վասն նախադրություններն արտահայտում են
նաև վերաբերության հարաբերություն և իրենց խնդիրների հետ լինում են
վերաբերության անուղղակի խնդիր: Օրինակներ. «Եւ հարցեալ ցնա յաղագս
մանուանն Յովսէփու» (Թ. Ա., էջ 307): «Պատմէր նոցա արքայն վասն առն
ուրումն ասորույ եպիսկոպոսի» (Կոր., էջ 42):

Յերեսաց որպես նախադրություն գործածվող բառն իր խնդրի հետ դառ-
նում է նաև անջատման անուղղակի խնդիր: Օրինակ՝ «Խէ փախիցէ մարդ
լեւեսաց առիծու, և պատահիցէ նմա արջ» (Աստ., հ. 3, էջ 454):

Գունակ, պէս, պէս գունակ, զոյգ, լու ի լու, համաձայն, հանգոյն, համե-
մատ, հաւասար, միարան, նման, իր, իրեւ, իրու, որպէս, զաղտ, զօրէն,
զօրինակ, օրինակ և այլ նախադրություններ ու իբրեւ այդպիսիք հանդես եկող
բառեր արտահայտում են գործողության կամ եղելության կատարման ձևը:
Իրանք իրենց խնդիրների հետ հիմնականում լինում են ձևի պարագա: Օրի-
նակներ. «Այլ նա ի վաղակաւորն հաստատեալ զաջն, պէս գունակ Յովատայ
Բագրատունույ, յիւր տունն անցեալ զնայր» (Խոր., էջ 332): «Լուարո՞ւք լուա-
րո՞ւք բանից իմոց, զի պատմեցից ձեզ լուիլու» (Աստ., հ. 3, էջ 285): «Մերթ
շանթէր գալարէր իրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իրեւ զառիւծ զայ-
րացեալ» (Եղ., էջ 16): «Առիւծն... զօրէն մարդոյ ի վեր առեալ զթաթուլն՝
ցուցանէր նմա զվէրն» (Բուդ., էջ 185):

Իրեւ, որպէս նախադրություններն արտահայտում են նաև բաղդատա-
կան հարաբերություն և իրենց խնդիրների հետ գործածվում են իբրեւ մասնա-
կան բացահայտիչ, ինչպես՝ «Իրեւ արդարոյ տրժան էր խորհել՝ թէ զի՞նչ
օգուտ զի ես առնեմ» (Եզնիկ, էջ 259): «Ես նմա բիւր բարիս խորհեցայ
որպէս հայր որդույ կատարել նմա, և նա ինձ շար րնդ բարույ հատոյց» (Բուդ.,
էջ 140):

Իրանցից մի բանիւր իրենց խնդիրների հետ լինում են նաև որոշիչ
(տե՛ս ստորև):

Բացասման, բացառման հարաբերություն են արտահայտում առանց,
բաց, բայց, քող, մերկ, ուրիշ, ուրոյն և այլ նախադրություններ ու իբրեւ այդ-
պիսիք գործածվող բառեր, որոնք իրենց խնդիրների հետ լինում են բացառ-
ման անուղղակի խնդիր: Օրինակներ. «Երկիր առանց ջուրց պատառի և խոր-
խուի» (Եզնիկ, էջ 10): «Այլ մեր զայլ աստուած ոչ գիտացաք բաց ի նմանէ»
(Աստ., հ. 2, էջ 494): «Բայց նրուանդայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր
զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կողմն» (Խոր., էջ 166):

Առանց-ք ցույց է տալիս նաև գործողության կատարման ձևը և իր խնդրի
հետ դառնում է ձևի պարագա: Օրինակ՝ «Առանց զձեզ ինչ աշիւատ առնելույ
խաղացաք զնացաք յերկիրն Յունաց, և առանց զործոյ պատեւագմի սիրով
մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն»
(Եղ., էջ 9):

Բացառման իմաստ ունեն նաև տեղ-տեղ որպէս նախադրություն հանդես
եկող քանց, քարց, քաւ, քաւ միայն ձևերը, ինչպէս՝ «Արդ են քանց սորա

առաջատին առաջեալ սաղմոսքն թուով վեց» (Յովհ. Իմ., էջ 20)¹³: «Եւ քանց բնութեան դմերն ընկալաւ ի կնոջէ» (ն. տ., էջ 51):

Տարբերակման, առանձնացման, սահմանափակման հարաբերությունն էն արտահայտում ընդհատ, զատ, օտար որպէս նախադրություն գործածվող բաները, որոնք իրենց խնդիրների հետ հիմնականում դառնում են ձևի պարագայ օրինակներ. «Եւ ոչ ինչ ընդհատ յայսց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր կօշկէ» (Խոր., էջ 174): «Այ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի» (Բուզ., էջ 200): «Յաղագս թէ ինչ որ օտար ի Մովսիսէ պատմեն այլքն հնախօսք» (Խոր., էջ 22):

Ընդդիմության հարաբերությունն էն արտահայտում նախադրության դերում հանդես եկող հակառակ, հեռուկս բառերը: Ինչպէս արդեն նշվել է, ընդդիմության իմաստ ունեն նաև առաջի և ընդդէմ բառերը: Դրանք իրենց խնդիրների հետ լինում են ընդդիմության անուղղակի խնդիր: Օրինակներ. «Զի թէ Աստուած ի մեր կոյս լինիցի, ո՞վ կարիցէ կալ մեզ հակառակ» (Ա. լ., էջ 100)¹⁴: «Զի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ դայն շար ինչ կամացն հեռուկս ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն» (Բուզ., էջ 194):

Ընդդիմության հարաբերությունն արտահայտող նախադրությունները ցույց են տալիս նաև գործողության կատարման ձևը և իրենց խնդիրների հետ դառնում են ձևի պարագա, ինչպէս՝ «Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարըդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ քաղալորութեանս» (Խոր., էջ 163):

Միջոցի հարաբերությունն արտահայտող նախադրություններն ու իբրև այդպիսիք հանդես եկող բառերն են՝ ի ձեռն, ընդ ձեռն, ընդ ձեռամբ, ի ձեռս, ի ձեռանէ, ի ձեռաց, շնորհիւ, ի դէմս և այլն: Դրանք ցույց են տալիս այն առարկան, որի միջոցով կամ օգնությամբ կատարվում է գործողությունը և իրենց խնդիրների հետ դառնում են միջոցի անուղղակի խնդիր: Օրինակներ. «Այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Եղ., էջ 6): «Նշանք ևս բժշկութեան յԱստուծոյ յաջողեալ լինէր ի ձեռս նոցա» (ն. տ., էջ 196): «Պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն» (Ագաթ., էջ 72): «Որ և ծագեաց իսկ ի սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի» (Աստ., հ. 4, էջ 438):

Ի ձեռն, ի ձեռանէ, ի ձեռաց, ընդ ձեռամբ նախադրությունների և նրանց խնդրի միջոցով գրաբարում արտահայտվում է ներգործող խնդիրը, օրինակ՝ «Զի ոչ միայն ի ձեռն արանց, այլ և ի ձեռն կանանց սրբոց քարոզեցաւ Աւետարանն կենդանութեան ընդ տիեզերս ամենայն» (Ագաթ., էջ 354):

Ի ձեռանէ, ի ձեռաց կազմություններն արտահայտում են նաև անջատման հարաբերություն և իրենց խնդիրների հետ լինում են անջատման անուղղակի խնդիր: Օրինակներ. «Ասէ՛ Աստուած Հօր իմոյ օգնական իմ, և ապրնցայց գիս ի ձեռաց փառաւոնի» (Աստ., հ. 1, էջ 142): «Եւ մի ապրեսցի ի ձեռանէ Երկարոյ» (ն. տ., հ. 3, էջ 293):

¹³ «Յովհաննու Իմաստասիրի Աւանցւոյ Մատենադրութիւնք», Վենետիկ, 1833:

¹⁴ «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», Երևան, 1963:

Փոխարինության, փոխարինման հարաբերություն են արտահայտում փոխանակ, փոխարեն, ի տեղի նախադրությունները: Դրանք իրենց խնդիրների հետ կատարում են նախադասության այն անդամի դերը, որի փոխարեն գործածվում են: Օրինակներ. «Արդ՝ փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտաւակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ» (Ագաթ., էջ 395): «Բարի արախոնարհին՝ և մի՛ ձեռն տար ամբարշտին զի մի՛ կրկին չար փոխարէն րաւեալն ի նմանէ գտցես» (Աստ., հ. 4, Յաւելուած, էջ 14): «Ի նմին աւուր զորդի նորին զՇապուհ, զոր ի տեղի Աւշակունւոյն թաղաւորեցոյց ի վերայ աշխարհիս՝ անդրէն ի դրանն մարդկանէ զաւով յարքունիքն սատակեցին» (Փար., էջ 19): Առաջին օրինակում նախադրությունն իր խնդրի հետ փոխարինում է ենթակային, իսկ մյուսներում՝ ուղիղ խնդրին:

Միասնության հարաբերություն են արտահայտում հանդերձ նախադրությունն ու նախադրության դերում գործածվող կից ածականը: Միասնության իմաստ ունեն նաև զնետ, զկնի, յետ, յետս բառերը: Դրանք իրենց խնդիրների հետ դառնում են միասնության պարագա: Օրինակներ. «Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն զտէրն Մամիկոնէից Վարդան՝ հանդերձ բնկեալկցօքն իւրովք և ամենայն Հայոց զնդան» (Փար., էջ 66): «Աղաղակեցին և երկոքին ծերքն կից նմին» (Աստ., հ. 3, էջ 658):

Փան, առաւել քան, աւելի քան նախադրություններն արտահայտում են բաղդատական հարաբերություն: Դրանք ցույց են տալիս խնդրի արտահայտած իմաստին հավասար կամ նրանից ավելի և կամ պակաս հատկանիշ ու իրենց խնդիրների հետ դառնում են, այսպես կոչված, համեմատության անուղղակի խնդիր: Օրինակներ. «Մեծ և բարձր է պատիւ կաթողիկէ եկեղեցւոյ քան զամենայն րաւորութիւնս սրբոցն» (Ագաթ., էջ 389): «Նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն յինչ և կամէր» (Եղնիկ, էջ 102):

Դրանք ցույց են տալիս նաև գործողության կամ եղելության կատարման չափ ու քանակը. այդ պնդում իրենց խնդիրների հետ դառնում են չափ ու քանակի պարագա: Այսպիսի կիրառություն ունի նաև որպես նախադրություն գործածվող չափ գոյականը: Օրինակներ. «Չարչարեսցիս առաւել քան զՏիրան զհայրն քո» (Բուդ., էջ 102): «Եւ մեծացուցանէր զթագաւորն աւելի քան զարեգակն» (Եղ., էջ 163): «Ասացից ձեզ լու ի լու, մինչև քննիցէք զբանս թլ ձեւի չափ իմանայցեմ» (Աստ., հ. 3, էջ 306):

Աւելի քան և առաւել քան նախադրությունները ցույց են տալիս նաև իրենց խնդրի հատկանիշը՝ չափը, քանակը, որպիսությունը և այլն: Այս դեպքում իրենց խնդիրների հետ գործածվում են իբրև որոշիչ: Օրինակներ. «Աւելի քան զԵսայի հաւիտ վարդապետս յղէր ընդ նոսա» (Եղ., էջ 51): «Աւելի քան զԲաղդատ զանապուհ զարեգակն» (Բուդ., էջ 185):

Իրենց խնդիրների հետ որոշիչ կարող են դառնալ նաև համեմատ. նման, ախ, և այլ նախադրություններ ու իբրև այդպիսիք հանդես եկող բառեր: Օրինակներ. «Եւ տեսանելով քան զայլս զեղեցիկ՝ զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր» (Բուդ., էջ 43): «Եկայք արասցուք Աղամայ օղնական նման նմա» (Ագաթ., էջ 144):

Որոշ նախադրություններ երբեմն իրենց խնդիրների հետ գործածվում են իբրև ստորոգելիական վերադիր: Օրինակներ. «Ապա ուրեմն լեզուք նշանակի վասն են» (Աստ., հ. 4, էջ 425): «Քանզի անպատում է և ի վեր քան զմիտս

և զլեզուս մարդկան» (Եղնիկ, էջ 263): «Զի տէրունի հրամանքն՝ ամենեցուն զեր ի վերոյ են» (Ազաթ., էջ 212):

Այսպիսով, նախադրություններն ու որպես նախադրություն դործածվող բառերը դրաբարում մեծ մասամբ լինում են ստորոգյալի լրացումներ, ամենից շատ՝ պարագաներ (տեղի, ժամանակի, ձևի, նպատակի, պատճառի, միասնության, զիջման, չափ ու քանակի և այլն), այնուհետև՝ խնդիրներ (միջոցի, վերաբերության, ընդդիմության, բացառման, ներգործող, անջատման, հանգման, համեմատության և այլն):

Մի քանի նախադրություններ և իբրև այդպիսիք դործածվող բառեր իրենց խնդիրների հետ, բացի ստորոգյալի լրացումներ գառնալուց, երբեմն լինում են նաև ենթակալի լրացումներ (որոշիչ, մասնական բացահայտիչ) և ստորոգելիական վերադրի:

РОЛЬ ПРЕДЛОЖНЫХ СЛОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В ОБРАЗОВАНИИ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ

Ж. Б. ТОСУНЯН

(Резюме)

Как известно, служебные части речи вообще не становятся членами предложения. Но предложные слова, в отличие от союзов, модальных слов и междометий, сочетаются со склоняемыми словами и с ними вместе становятся одним составным членом предложения.

Роль предложных слов древнеармянского языка в образовании членов предложения заключается в том, что они выражают различные значения. Большинство предложных слов выражают локальные, пространственные отношения. К числу таких предложных слов относятся *առաջի*, *դռաջևաւ*, *արտաքոյ*, *յանդիման*, *դէպ*, *պէտք*, *զհետ*, *ընդդէմ*, *ի թիկանց*, *պթիկամբբ*, *ի կողմն*, *ի նոդմանս*, *ի մէջ*, *ի միջի*, *ի միջոյ*, *ի ներքոյ*, *ի վերայ*, *ի վերոյ*, *հուսլ*, *մերձ*, *մօտ*, *մինչ*, *մինչև*, *շուրջ*, *շուրջանակի*, *ի ստորև* и др. Другие предложные слова выражают временные (*յետ*, *յառաջ քան*, *նախ քան*, *ի հետէ*), целевые (*ի համար*, *ի պէտս*, *սակս*, *ի սակս*, *վասն* и др.), причинные (*աղազաւ*, *յաղաղս*, *պատճառս*, *ի պատճառս* и др.), инструментальные (*ի ձեռն*, *ընդ ձեռն*, *ի ձեռս*, *ընդ ձեռամբ*, *ի դէմս* и др.), комитативные (*հանդերձ*, *կից*), сравнительные (*քան*, *առաւել քան*, *աւելի քան*) отношения. Остальные предложные слова выражают значения образа действия (*դունակ*, *պէս*, *հանգոյն*, *նման*, *իբր*, *որպէս*, *գորէն* и др.), отрицания (*առանց*, *բաց*, *բայց*, *թող*, *մերկ*, *որոյն*, *որիչ* и др.), заместительства (*փոխանակ*, *փոխարէն*, *ի տեղի*) и т. п.

Таким образом, предложные слова с теми словами, с которыми они употребляются, в основном бывают обстоятельствами и дополнениями.